# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հունվարի 2026թ. թիվ 8-Ա

Ա.ՔԱՌՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԹԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ-Ի ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 259-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2026 թվականի հունվարի 5-ի թիվ 3-Ա որոշումը և հաշվի առնելով Ա.Քառյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Աթանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Անդրանիկ Քառյանին 2026 թվականի հունվարի 7-ից նշանակել «ՀՀ Լոռու մարզի Աթանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող՝ մինչև օրենքով սահմանված կարգով «ՀՀ Լոռու մարզի Աթանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի նշանակումը:

2. «ՀՀ Լոռու մարզի Աթանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

«ՀՀ Լոռու մարզի Աթանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարման համար Ա.Քառյանին տալ լրավճար «ՀՀ Լոռու մարզի Աթանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի հաստատված աշխատավարձի 30%-ի չափով:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. հունվարի 7
ք.Վանաձոր